ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/36

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի տնօրեն

Հ. Ղազարյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական, N 03Ա992480)

քննելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար համակարգչային, պատճենահանման սարքերի և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 03.06.2019թ. ներկայացված (04.06.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/36 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 03.06.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության նպատակով Ընկերության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գնման գործընթացը կազմակերպվել է առանց իրավական հիմքի՝ գնումների պլանի նախապես հրապարակման, հետևաբար համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Համաձայն Կարգի 17-րդ կետի՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին և/կամ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

«Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.06.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 06.06.2019թ. թիվ 20/451 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնումների պլանը www.procurement.am կայքում հրապարակվել է 01.04.2019թ., գնման ընթացակարգը հայտարարվել է 21.05.2019թ., իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 31.05.2019թ. ժամը 10:00-ն:

Գնումների պլանները հասանելի են նաև ցանկացած անձի համար, անկախ armeps.am/ppcm կայքում գրանցված լինելու հանգամանքից՝ https://armeps.am/ppcm/public/reports կայքի «Գնումների պլաններ» բաժնում:

Պատվիրատուն ներկայացրել է «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի իրավական հիմք հանդիսացող նախապես www.procurement.am կայքում հրապարակված գնումների պլանի փոփոխությանը վերաբերող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.06.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իր կարիքների համար համակարգչային, պատճենահանման սարքերի և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով 21.05.2019թ. հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. 01.04.2019թ. www.procurement.am կայքում հրապարակվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2019թ. գնումների պլանի փոփոխությունը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 03.06.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 06.06.2019թ. թիվ 20/451 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ **գնումների պլանավորումը**, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է **տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:** Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական

գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իր կարիքների համար համակարգչային, պատճենահանման սարքերի և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԱԾ-ՏԱևԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը www.procurement.am (www.gnumner.am) կայքում հրապարակվել են 21.05.2019թ.:

Ընթացակարգը կազակերպվել է 27 չափաբաժիններով՝ հետևյալ գնման առարկաների համար՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը	CPV կոդեր	չափման միավորը /Ընդհանուր քանակը
1	լուսապատճենահանող սարքավորումների մասեր — պարագաներ	30121450/20	1 հատ
2	լուսապատճենահանող սարքավորումների մասեր — պարագաներ	30121450/21	1 հատ
3	լուսապատճենահանող սարքավորումների մասեր — պարագաներ	30121450/22	1 հատ
4	լուսապատճենահանող սարքավորումների մասեր — պարագաներ	30121450/23	1 հատ
5	լուսապատճենահանող սարքավորումների մասեր — պարագաներ	30121450/24	1 հատ
6	լուսապատճենահանող սարքավորումների մասեր —	30121450/25	1 հատ

	պարագաներ		
7	լուսապատճենահանող սարքերի տոներ	30121480/11	3 կգ
8	քարտրիջներ	30121500/70	5 հատ
9	քարտրիջներ	30121500/71	3 հատ
10	քարտրիջներ	30121500/72	5 հատ
11	քարտրիջներ	30121500/73	8 հատ
12	կենտրոնական պրոցեսորներ (cpu) կամ պրոցեսորներ	30211160/2	2 հատ
13	անձնական համակարգիչներ	30211190/6	10 հատ
14	դյուրակիր համակարգիչներ	30211200/4	1 հատ
15	լազերային տպիչներ	30232110/3	90 հատ
16	շիթային տպիչներ	30232150/3	3 հատ
17	համակարգչի կոշտ սկավառակ	30232231/7	25 հատ
18	համակարգչի կոշտ սկավառակ	30232231/8	25 հատ
19	համակարգչի կոշտ սկավառակ	30232231/9	20 հատ
20	տեղեկությունների պահպանման կրիչներ	30232480/10	1 հատ
21	տեղեկությունների պահպանման կրիչներ	30232480/9	12 հատ
22	տեսաքարտեր	30237137/3	5 հատ
23	մայրական պլատաներ	30237140/3	3 հատ
24	պատճենահանման մեքենա	30239100/4	1 հատ
25	պատճենահանման մեքենա	30239100/5	25 հատ
26	անխափան սնուցման աղբյուրներ	31151120/3	35 հատ
27	էկրաններ	32351120/5	5 հատ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ տեղեկագիրը սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից www.procurement.am (www.gnumner.am) կայքում հրապարակված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ **01.04.2019թ.** տեղեկագրում հրապարակվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2019թ. գնումների պլանի փոփոխությունը, որում սահմանված կարգով ներառված են «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-

ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկա հանդիսացող 1-27 չափաբաժիններով նախատեսված բոլոր ապրանքները՝ համապատասխան քանակներով:

Այսպիսով՝ Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:**

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և 01.04.2019թ. տեղեկագրում հրապարակված գնումների պլանի հիման վրա, ուստի գտնում եմ, որ «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 03.06.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**